

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ



ԻՄ ԿՐԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ



ԻՄ ԿՐԹԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Տևողությունը – 45 րոպե

Թիրախային խումբ – 7–9-րդ դասարաններ

Ճիշտ ժամանակ – Սեպտեմբերի 1 կամ առաջին դասղեկի ժամ

Ֆորմատ – զրույց, խմբային աշխատանք, ինտերակտիվ խաղեր, տեսանյութ

Նպատակը՝

Օգնել աշակերտներին գիտակցել իրենց կրթական ներուժի դերը սեփական և երկրի ապագայի կառուցման գործում:

Ձևավորել պատասխանատվության զգացում սեփական ապագայի և հայրենիքի ապագայի համար:

Ընդգծել կրթության արժեքը և շարունակական ուսումնառության կարևորությունը:

Ձևավորվող արժեքներ

հայրենասիրություն, ստեղծագործական աշխատանք, գիտելիքի արժևորում:

Միջառարկայական կապ

գրականություն, հասարակագիտություն, պատմություն, նկարչություն:



ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.



1. ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՄԱՍ (10 ԲՈՊԵ)

- Ողջույն և շնորհավորանքներ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ
- Զրույց աշակերտների տրամադրության մասին :
«Ինչպիսի՞ սպասումներ ունեք այս ուսումնական տարվանից»:
- Վիկտորինա «Գիտելիքի պահոց» (կարճ հարցեր՝ մեծ հայտնագործությունների մասին):

3. ՎԵՐՋԱԲԱՆ ԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁ (10 ԲՈՊԵ)

- Վարժություն «Դպրոցը ապագայում» աշակերտները նկարագրում են, թե ինչպիսին կլինի իրենց դպրոցը 50 տարի անց:


2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ (25 ԲՈՊԵ)

- Խաղ «Կերտիր ապագայի պատկերը»
- Խաղ «Կամուրջ ներկայից ապագա»
- Կարճ զրույց «Կրթությունը՝ որպես անձնական հաջողության հիմք»

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Մինի-նախագիծ «Իմ կրթական ճանապարհային քարտեզը»

1. ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՄԱՍ (10 ԲՈՊԵ)



Ուսուցիչ.

-----Բարի առավոտ, սիրելի՛ աշակերտներ:


Շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա մեկնարկի և Գիտելիքի օրվա կապակցությամբ:

Սեպտեմբերի 1-ը միշտ էլ մի քիչ տոն է, մի քիչ նոր սկիզբ, մի քիչ սպասում: Օր ' երբ բացվում են նոր հնարավորություններ, նոր էջեր մեր կյանքի պատմության մեջ: Նոր նպատակներ, որոնք դեռ չեք հասցրել գրել, բայց արդեն ձեր մտքում կան: Եվ ամենակարևորը՝ նոր պատմություններ, որոնք մենք միասին կստեղծենք այս տարի: Այսօրվանից սկսած ձեր յուրաքանչյուր քայլը, ձեր յուրաքանչյուր ձեռքբերումն ու հաղթանակը կդառնան ձեր ապագայի հիմքը: Թող այս ուսումնական տարին լինի հետաքրքիր, լի նոր գիտելիքներով, ստեղծագործական մտքերով և հաղթանակներով:

Հիշե՛ք՝ ամեն օր ձեր ձեռք բերած նույնիսկ փոքրիկ գիտելիքը ձեզ մոտեցնում է ձեր երազանքներին: Սիրելի՛ երեխաներ, այսօր մենք կխոսենք ամենակարևորի մասին՝ ձեր ապագայի, ձեր կրթական ներուժի և այն ճանապարհի մասին, որը տանում է դեպի երազանքների իրականացում: Կխոսենք ոչ միայն այն մասին, թե ինչ կսովորենք, այլև կփորձենք հասկանալ, ինչի համար ենք սովորում: Որովհետև, հավատացե՛ք, ուսումը պարզապես «գնա՛ դպրոց» առավոտյան հրահանգը չէ, այլ այն մուտքի տոմսն է, որը ձեզ տանում է դեպի ձեր ապագան:



Զրույց աշակերտների տրամադրության մասին
«Ինչպիսի՞ սպասումներ ունեք այս ուսումնական տարվանից»:




Ուսուցիչ---

Մենք հաճախ ասում ենք «երջանիկ ապագա», «պայծառ ապագա»,
«երազել ապագայի մասին», «վստահություն ապագայի նկատմամբ»:
Ի՞նչ նկատի ունենք: Ինչո՞ւ ենք մեր հույսերն ու երազանքները կապում
ապագայի հետ:

Աշակերտների պատասխանները:

Ուսուցիչ -Տարբեր պատմական ժամանակաշրջաններում հայերը,
բնակվելով գրեթե բոլոր մայրցամաքներում, մշտապես զարմացրել են
իրենց գյուտերով ու հայտնագործություններով: Հայերի ստեղծած
ամենահայտնի իրերն ու տեխնոլոգիաները փոխել են աշխարհն ու
հեշտացրել մարդկության կյանքը:
Եկեք միասին մի փոքրիկ խաղի միջոցով պարզենք ,թե ինչ գիտենք
մենք հայ գյուտարարների մասին:





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

Ո՞Վ Է ՀԱՅԱԶԳԻ ԱՅՆ ՖԻԶԻԿՈՍԸ, ՈՐԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՊՈԶԻՏՐՈՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԱՅԻ (PET SCAN) ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ:

- Ա) ՄԱՅՔԼ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ
- Բ) ՌԱՅՄՈՆԴ ԴԱՄԱԴՅԱՆ
- Գ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ
- Դ) ԱՐԹՈՒՐ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

Ո՞վ է ՀԱՅԱԶԳԻ ԱՅՆ ՖԻԶԻԿՈՍԸ, ՈՐԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է
ՊՈԶԻՏՐՈՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԱՅԻ (PET SCAN)
ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ:

Ա) ՄԱՅՔԼ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ 

Բ) ՌԱՅՄՈՆԴ ԴԱՄԱԴՅԱՆ

Գ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ

Դ) ԱՐԹՈՒՐ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆ



ՎԻԿՏՈՐԻԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



2. Ո՞Վ Է ԲԵՏՈՆԱԽԱՌՆԻՉԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՂԸ:

- Ա) ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
- Բ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ
- Գ) ԼՅՈՒԹԵՐ ՍԻՄԻՋՅԱՆ
- Դ) ՎԱՐԱԶԴԱՏ ՂԱԶԱՆՉՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

2. Ո՞Վ Է ԲԵՏՈՆԱԽԱՌՆԻՉԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՂԸ:

- Ա) ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ 
- Բ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ
- Գ) ԼՅՈՒԹԵՐ ՍԻՄԻԶՅԱՆ
- Դ) ՎԱՐԱԶԴԱՏ ՂԱԶԱՆՉՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

Յ.ՈՐՎ Է ՍՏԵՂԾԵԼ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԻ (MRI) ՍԱՐՔԸ:

- Ա) ՄԱՅՔԼ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ**
- Բ) ԱՐԹՈՒՐ ՍԱՐԱՖՅԱՆ**
- Գ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԴԱՄՅԱՆ**
- Դ) ՌԱՅՄՈՆԴ ԴԱՄԱԴՅԱՆ**





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

Յ. Ո՞Վ Է ՍՏԵՂԾԵԼ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԻ (MRI) ՍԱՐՔԸ:

Ա) ՄԱՅՔԸ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

Բ) ԱՐԹՈՒՐ ՍԱՐԱՖՅԱՆ

Գ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԴԱՄՅԱՆ

Դ) ՌԱՅՄՈՆԴ ԴԱՄԱԴՅԱՆ ✓



ՎԻԿՏՈՐԻԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



4. Ո՞Վ Է ՍՏԵՂԾԵԼ ԲԱՆԿՈՄԱՏԸ:

- Ա) ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ
- Բ) ԼՅՈՒԹԵՐ ԶՈՐԶ ՍԻՄԻԶՅԱՆ
- Գ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ
- Դ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ



ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



4. Ո՞Վ Է ՍՏԵՂԾԵԼ ԲԱՆԿՈՄԱՏԸ:

- Ա) ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ
- Բ) ԼՅՈՒԹԵՐ ԶՈՐԶ ՍԻՄԻԶՅԱՆ ✓
- Գ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ
- Դ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ



ՎԻԿՏՈՐԻԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



5. Ո՞Վ Է ՄՇԱԿԵԼ MIG ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԸ:

- Ա) ԱՐԹՈՒՐ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆ**
- Բ) ՌՈՒԲԵՆ ԷՔՍԵՐՋՅԱՆ**
- Գ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ**
- Դ) ԱԼԲԵՐՏ ԿԱՊԻԿՅԱՆ**



ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



5. Ո՞Վ Է ՄՇԱԿԵԼ MIG ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐԸ:

Ա) ԱՐԹՈՒՐ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆ

Բ) ՌՈՒԲԵՆ ԷՔՍԵՐՋՅԱՆ

Գ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ 

Դ) ԱԼԲԵՐՏ ԿԱՊԻԿՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

6. Ո՞վ է ՍՏԵՂԾԵԼ ԹԹՎԱԾՆԱՅԻՆ ԴԻՄԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ:

- Ա) ԱՐԹՈՒՐ ԲՈՒԼԲՈՒԼՅԱՆ
- Բ) ՄԱՅՔԼ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ
- Գ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ
- Դ) ԺԻՐԱՅՐ ՏԵԶԵԼ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

6. Ո՞ր վ է ստեղծել թթվածնաձև շնչառություն, որոնք
օգտագործվել են երկրորդ համաշխարհային
պատերազմում:

- Ա) Արթուր Բոլեբոկյան 
- Բ) Մաքս Եր-Պոլոսյան
- Գ) Արսաշես Հակոբյան
- Դ) Ժիրար Տեքել




ՎԻԿՏՈՐԻՆԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



7. Ո՞ր է գոնաՎոր հեռուստատեսությունը՝ ՍԵՂԾՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ:

- Ա) ՔՐԻՍՏՈՖԵՐ ՏԵՐ-ՍԵՐՈԲՅԱՆ
- Բ) ԳԱԲՐԻԵԼ ՂԱԶԱՆՉՅԱՆ
- Գ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԴԱՄՅԱՆ
- Դ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

7. Ո՞վ է ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԸ:

Ա) ՔՐԻՍՏՈՑԵՐ ՏԵՐ-ՍԵՐՈՒՄՅԱՆ

Բ) ԳԱԲՐԻԵԼ ՂԱԶԱՆՉՅԱՆ

Գ) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԴԱՄՅԱՆ 

Դ) ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆ



ՎԻԿՏՈՐԻՆԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»



8. Ո՞Վ է ՍՏԵՂԾԵԼ ՄԱԶԵՐԻ ՉՈՐԱՑՄԱՆ ՍԱՐՔԸ:

- Ա) ԼՅՈՒԹԵՐ ՍԻՄԻՋՅԱՆ
- Բ) ԷՄԻԿ ԱՎԱԳՅԱՆ
- Գ) ՎԱՐԱԶԴԱՏ ՂԱԶԱՆՉՅԱՆ
- Դ) ԳԱԲՐԻԵԼ ՂԱԶԱՆՉՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

8. Ո՞Վ է ՍՏԵՂԾԵԼ ՄԱԶԵՐԻ ՉՈՐԱՑՄԱՆ ՍԱՐՔԸ:

- Ա) ԼՅՈՒԹԵՐ ՍԻՄԻՋՅԱՆ
- Բ) ԷՄԻԿ ԱՎԱԳՅԱՆ
- Գ) ՎԱՐԱԶԴԱՏ ՂԱԶԱՆՉՅԱՆ
- Դ) ԳԱԲՐԻԵԼ ՂԱԶԱՆՉՅԱՆ ☒





ՎԻԿՏՈՐԻՆԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

9. Ո՞Վ է ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵԼ ԱՄԵՐԻԿԱՆ ԴՈԼԱՐԻ ԿԱՆԱԶ ՆԵՐԿԸ, ՈՐԸ ԴԺՎԱՐ Է ԿԵՂԾԵԼ:

- Ա) ՔՐԻՍՏՈՖԵՐ ՏԵՐ-ՍԵՐՈՒՖՅԱՆ
- Բ) ԱՎԵՏԻՍ ԶԻԼՃՅԱՆ
- Գ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ
- Դ) ՌՈՒԲԵՆ ԷՔՍԵՐՋՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

9. Ո՞Վ է ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵԼ ԱՄԵՐԻԿԱՆ ԴՈԼԱՐԻ ԿԱՆԱԶ ՆԵՐԿԸ,
ՈՐԸ ԴԺՎԱՐ Է ԿԵՂԾԵԼ:

- Ա) ՔՐԻՍՏՈՖԵՐ ՏԵՐ-ՍԵՐՈԲՅԱՆ 
- Բ) ԱՎԵՏԻՍ ԶԻԼՃՅԱՆ
- Գ) ԱՐՏԱՇԵՍ ՀԱՅԿԱՆՅԱՆ
- Դ) ՌՈՒԲԵՆ ԷՔՍԵՐՋՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ «ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

10. Ո՞վ է ՍՏԵՂԾԵԼ ՁԵՌՔՈՎ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԸ ԵՒ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ:

- Ա) ԱՐԹՈՒՐ ՍԱՐԱՖՅԱՆ
- Բ) ԱԼԲԵՐՏ ԿԱՊԻԿՅԱՆ
- Գ) ԷՄԻԿ ԱՎԱԳՅԱՆ
- Դ) ՎԱՐԱԶԴԱՏ ՂԱԶԱՆՉՅԱՆ





ՎԻԿՏՈՐԻՆԱ

«ԳԻՏԵԼԻՔԻ ՊԱՀՈՑ»

10. Ո՞վ է ՍՏԵՂԾԵԼ ՁԵՌՔՈՎ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԸ ԵՒ ԱՐԺԱՆԱՑԵԼ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ:

Ա) ԱՐԹՈՒՐ ՍԱՐԱՖՅԱՆ

Բ) ԱԼԲԵՐՏ ԿԱՊԻԿՅԱՆ

Գ) ԷՄԻԿ ԱՎԱԳՅԱՆ ☒

Դ) ՎԱՐԱԶԴԱՏ ՂԱԶԱՆՉՅԱՆ





Ուսուցիչ ----Տեսնում ե՞ք, թե ինչպես է անցյալի
յուրաքանչյուր իրադարձություն ազդել այն
աշխարհի վրա,որում մենք ապրում ենք: Նույն
կերպ, ձեր գիտելիքները, որոնք դուք ստանում եք
հիմա, կարող են ազդել ապագայի վրա:
Ապագայի պատկերը մի բան է, որը մենք կարող
ենք սկսել ձևավորել հենց հիմա: Ժամանակակից
տեխնոլոգիաները ապագայի հիմքն են: Եվ
ինչպիսի՞ն կարող է լինել այդ ապագան: Եկեք մի
փոքր երևակայենք:



2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ (25 ՐՈՊԵ)

ԽԱՂ «ԿԵՐՏԻՐ ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԿԵՐԸ» (10 ՐՈՊԵ)

1

Աշակերտները ստանում են տարբեր ոլորտներ ներկայացնող նկար-քարտեր (քաղաքաշինություն, տրանսպորտ, գյուղատնտեսություն, թվային տեխնոլոգիաներ, տիեզերք, էներգետիկա):

2

Բաժանվում են խմբերի, յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ ոլորտ և նկարագրում, թե ինչպիսին այն կարող է լինել ապագայում և ինչ դեր կարող է ունենալ մեր երկիրն այդ ոլորտում:
/Կարող եք աշակերտներին տրամադրել պաստառներ, մարկերներ, կաշուն թղթեր/:

3

Աշակերտների ներկայացնելուց հետո կարող եք ցուցադրել, թե ինչպիսի տարբերակ է առաջարկել ԱԲ-ը:




ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆԿԱՐ-ՔԱՐՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



քաղաքաշինություն



ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆԿԱՐ-ՔԱՐՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



տրանսպորտ



ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆԿԱՐ-ՔԱՐՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



գյուղատնտեսություն



ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆԿԱՐ-ՔԱՐՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



ԹՎԱՅԻՆ տեխնոլոգիաներ



ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆԿԱՐ-ՔԱՐՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



տիեզերք



ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆԿԱՐ-ՔԱՐՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



Էներգետիկա



Ապագայի ֆերմա

Ոլորտ՝ գյուղատնտեսություն

Ապագայում Երկրի բոլոր բնակիչներին
կտրամադրվի բարձրորակ և առողջարար
արտադրանք, իսկ Հայաստանը
կարևոր ներդրում կունենա
համաշխարհային գյուղատնտեսության
մեջ:





Ապագայի տիեզերական կայան

Ոլորտ՝ Տիեզերք

Հայաստանը կմիանա տիեզերքի
ուսումնասիրության
ոլորտին՝ ապահովելով նոր
հնարավորություններ
հետազոտությունների և
հաղորդակցության համար:



Տեղեկատվական մշակման կենտրոն

Ոլորտ՝ թվային տեխնոլոգիաներ

Հայաստանում թվային տեխնոլոգիաների
զարգացումը կապահովի
տեղեկատվության անհապաղ և անվտանգ
փոխանակում:





Արևային էլեկտրակայան

Ոլորտ՝ էներգետիկա

Հայ գիտնականներն ու
ինժեներները կստեղծեն
աշխարհի ամենահզոր և
էկոլոգիապես մաքուր
էլեկտրակայանները:



Ապագայի ավտոբուս Ոլորտ 'Տրանսպորտ

Ապագայի տրանսպորտը
կդառնա ավելի արագ, ավելի
էկոլոգիապես մաքուր և մատչելի՝
կապելով քաղաքներն ու հարևան
երկրները նվազագույն
ծախսերով:




Ուսուցիչ:----- Սա ապագայի այն պատկերն է, որը մենք ստեղծել ենք:
Այս բոլոր տարրերը կարևոր են ստեղծելու այն աշխարհը, որտեղ մենք
ուզում ենք ապրել՝ մի աշխարհ, որտեղ տեխնոլոգիաները օգնում են մեզ
զարգանալ, որտեղ ուժեղ և անկախ Հայաստանը աճում և զարգանում է:



Խաղ «Կամուրջ ներկայից ապագա» (10 րոպե)

Ուսուցիչ: Որպեսզի պարզենք, թե ինչպիսին կլինի ապագան մեզանից յուրաքանչյուրի համար, փորձենք միասին կառուցել «Կամուրջ դեպի ապագա»: Էկրանին դուք տեսնում եք կամրջի պատկեր, որտեղ մեկ ափը խորհրդանշում է «Ներկան», իսկ մյուսը՝ «Ապագան»: Կամուրջը բաղկացած է «աղյուսներից»՝ քայլերից և գործողություններից, որոնք դուք կարող եք անել հիմա՝ ապագայում որոշակի նպատակների հասնելու համար: Աշակերտները կապում են այն գործողությունները կամ հմտությունները, որոնք նրանք կարող են զարգացնել ներկայում, և դրանց արդյունքը ապագայում:

Խաղ «Կամուրջ ներկայից ապագա» (10 րոպե)



Խաղ «Կամուրջ ներկայից ապագա» (10 րոպե)

«Ներկա» կողմի բլոկները՝

1. Սովորեք մաթեմատիկա:
2. Զբաղվեք սպորտով:
3. Ուսումնասիրեք տեղեկատվական տեխնոլոգիաները:
4. Կարդացեք գրքեր:
5. Մասնակցեք տարբեր կրթական նախագծերին:
6. Սովորեք լեզուներ:
7. Ուսումնասիրեք հոգեբանություն և մարդկային հարաբերություններ:
8. Կատարեք բարի գործեր, օգնեք մարդկանց, հասարակությանը:

«Ապագա» կողմի բլոկները՝

1. Ստացեք ինժեներական մասնագիտություն:
2. Ունենալ լավ առողջություն:
3. Ստեղծեք կարիերա SS ոլորտում:
4. Ունենալ լայն հայացքներ, լինել հետաքրքիր զրուցակից:
5. Դառնալ առաջնորդ և կառուցել ձեր սեփական բիզնեսը, որը կնպաստի Հայաստանի հարստությանը:
6. Հաջողության հասնել արդար, բազմաբևեռ աշխարհ ստեղծելու գործում:
7. Կառուցել ուժեղ, մեծ ընտանիք:
8. Ճանաչվել և հարգվել ձեր բարի գործերի և հասարակական գործունեության համար:

Խաղ «Կամուրջ ներկայից ապագա» (10 րոպե)

Ուսուցիչ----Ի՞նչ եք կարծում՝ հնարավոր է նախապես իմանալ, թե ինչ գիտելիքների կարիք կունենաք ապագայում:



- Աշակերտները կապում են գործողությունները արդյունքների հետ:
- Քննարկում. «Ո՞ր քայլերը կարող ենք սկսել անել արդեն այսօր»:

Ուսուցիչ-----Մեզանից յուրաքանչյուրը կարող է սկսել կառուցել իր ապագան հենց հիմա: Գիտելիքները, հմտությունները և բարի գործերը «աղյուսներն» են, որոնք մեզ տանում են դեպի հաջողություն, և միայն մեզանից է կախված, թե ինչ ներդրում կունենանք ապագայում:

Կարճ գրույց «Կրթությունը՝ որպես անձնական հաջողության հիմք (5 թույն)»




- Օրինակներ հայտնագործություններից և նորարարություններից՝ /էկրանին սահիկաշար հայերի հայտնագործությունների մասին/:
- Քննարկում – «Ինչպե՞ս կարող է ձեր ապագա մասնագիտությունը զարգանալ առաջիկա 10–20 տարում»:








Հայերի համաշխարհային նշանակության գյուտերը



Մայքլ Տեր-Պողոսյան (1925-1996թթ.)

Ամերիկացի ֆիզիկոս, ով
պոզիտրոնային ճառագայթման
տոմոգրաֆիայի հայտնագործողներից
մեկն է: Ֆիզիկոսը ծագմամբ հայ էր,
ծնվել էր Ֆրանսիայում, հետագայում
տեղափոխվել էր ԱՄՆ: Ավելի ուշ
ընդունվել էր Վաշինգտոնի
համալսարանի բժշկական դպրոցը
(Washington University School of
Medicine): Նրա հայտնագործությունը
շատ կարևոր դեր խաղաց բժշկական
ախտորոշումների հետագա
զարգացման մեջ:



Ռեյմոնդ Վահան Դամադյան

Ռեյմոնդ Վահանի Դամադյան
(անգլ.՝ Raymond Vahan Damadian,
մարտի 16, 1936, Նյու Յորք, Նյու Յորք,
ԱՄՆ - օգոստոսի 3, 2022, Woodbury,
Օյսթեր Բեյ, Նասաու շրջան, Նյու
Յորք, ԱՄՆ), հայազգի գյուտարար,
որը հայտնագործել է
մագնիսառեզոնանսային պատկերի
ախտորոշման սարքը, որը
հնարավորություն է տալիս զննել
ներքին օրգաններն առանց
վիրահատական միջամտության:



Լյութեր Ջորջ Սիմիջյան

1939 թվականին Սիմջյանի մոտ ծնվեց կանխիկ դրամ տրամադրող ավտոմատ սարքի (անգլերեն՝ Automated Teller Machine- ATM) ստեղծման գաղափարը: Ի հեճուկս բանկերի թերահավատության նա մինչև 1960 թվականը գրանցում է 20 արտոնագիր՝ կատարելագործելով սարքը՝ հիմք ստեղծելով այսօրվա բանկոմատների համար: Վերջապես, 1960 թվականին նա պայմանագիր կնքեց Նյու Յորքի City Bank-ի (այսօր՝ Citibank) իր սարքը վեց ամիս ժամկետով փորձնական շահագործելու վերաբերյալ: Սակայն վեց ամիս անց պայմանագիրը խզվեց, քանի որ այն ժամանակ սարքն այսօրվա պես պահանջարկ չուներ: Ընդ որում, Սիմիջյանն առանձին արտոնագրել է ինչպես թղթադրամի, այնպես էլ՝ 1965 թվականին՝ մետաղադրամի համար նախատեսված բանկոմատի գյուտերը:



Բորիս Արտաշեսի Բաբայան

Խորհրդային և ռուսաստանցի գիտնական,
մանկավարժ, հաշվիչ տեխնիկայի մասնագետ:
Հաշվիչ համալիրների, համակարգչային
ծրագրավորման ճարտարապետական
սկզբունքների վերաբերյալ աշխատությունների
հեղինակ, Պետական և Լենինյան մրցանակների
դափնեկիր: Առաջին եվրոպական գիտնականը, որն
արժանացել է Intel Fellow կոչմանը: Աշխատանքները
վերաբերում են հաշվողական համալիրների
կառուցման ճարտարապետական սկզբունքներին,
ԷՀՄ-ների ծրագրային ապահովման հարցերին:
Ղեկավարել է բազմապրոցեսորային «Էլբրուս»
սերիայի ԷՀՄ-ների ստեղծման աշխատանքները:
Լուրջ ավանդ ունի ռազմական հաշվողական
համալիրների և արագագործ ԷՀՄ-ների ստեղծման
գործում:



Վարազդատ Ղազանջյան

Վարազդատ Կազանջյանը ծնվել է Երզնկայում 1879 թվականին: 1879 թվականին հաճախել է Սվասի ֆրանսիական Հիսուսի միաբանություն դպրոց, այնուհետև տեղափոխվել է Սամսուն, որտեղ աշխատել է եղբոր հետ միասին, այնուհետև աշխատել է փոստային ծառայությունում: Փախչելով Համիդյան ջարդերից՝ 1895 թվականի հոկտեմբերին մեկնել է ԱՄՆ, հաստատվել Մասաչուսեթս նահանգի Վուսթեր քաղաքում և աշխատել մետաղալարի գործարանում: 1900 թվականին, ստանալով ԱՄՆ քաղաքացիություն, Կազանջյանը 1902-1905 թվականներին սովորել է Հարվարդի համալսարանում, 1921 թվականին արժանացել դոկտորի աստիճանի: 1915-1919 թվականներին եղել է Հարվարդի համալսարանի բժշկական բաժնի ծնոտների և դեմքի գլխավոր վիրաբույժ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կամավոր միացել է Հարվարդի բժշկական զորքերին: Այստեղ նա բուժել է խրամատներում տուժածների վատ վնաստածքներ՝ ծնոտ, քիթ, այտեր, փամփուշտներից ու նռնակներից վնասված գանգեր: Աշխատելով Ֆրանսիայի ռազմադաշտերի ինքնաշեն հիվանդանոցների հասարակ պայմաններում՝ Կազանջյանը ցուցաբերում է մարդկային հոգատարություն և նորարարական բժշկական ընթացակարգեր, և սկսվել է նրա կարիերան՝ որպես պլաստիկ վիրաբույժության ժամանակակից պրակտիկայի հիմնադիր: 1916 թվականին Կազանջյանն ստացել է մայրի կոչում:



Արտաշես Հայկանյան

Հայտնագործել է առաջին պլաստիկ
կոնտեյներները, Coca Cola-ի
պլաստիկ շշերի արտադրման
մեքենան, ավտոմեքենայի
ապակիների մաքրիչները և այլն:




Արթուր Սարաֆյան

1931 թվականին 1,795,464 համարով արտոնագրվել է ինքնաշարժերի ավտոմատ փոխանցման տուփը, որն 1940 թվականից կիրառվել է ամերիկյան «Օլդսմոբիլ» մականիշի ավտոմեքենայում: 1957 թվականին 2,977,813 համարով արտոնագրում է ավտոյուղի չափիչի գյուտը: Սարաֆյանին է պատկանում նաև բենզինային պոմպի գյուտը, որն արտոնագրվել է 1961 թվականին 2,977,862 համարով: Ասատուր Սարաֆյան-Բենկերի՝ ԱՄՆ կառավարության կողմից ամենաարժեքավոր հայտնագործություններ են համարվել 1949 թվականին 2,492,831 համարով արտոնագրված ուղղաթիռի տրանսմիսիայի՝ Սիկորսկու շարժիչի փոխանցման տուփը, և 1932 թվականին 1,879,597 համարով արտոնագրված բազմագույն տպիչ սարքը:



Ռոջեր Էդուարդ Քոլլինգվուդ Ալթունյան

Հայտնագործել է ասթմայով հիվանդ մարդկաց համար ինհալյատորը և նատրիումի կրոմոլինը, որոնք օգտագործվում են ասթմայի, ալերգիայի բուժման համար, ինչպես նաև աչքի կաթիլներում:



Քրիստոֆեր Տեր-Սերոբյան

1843 թվականին նա բազմաթիվ քիմիական փորձարկումներից հետո ստանում է ներկի յուրահատուկ բաղադրություն, որն անհնար էր կեղծել:

Իր կատարած գյուտն արտոնագրել է 1854 թվականին, սակայն անվտանգության նկատառումներով արտոնագրի մասին ողջ տեղեկատվությունը մինչ օրս պահվում է հույժ գաղտնի: Դոլարի ներկագույների գյուտի համար արժանացել է ԱՄՆ կառավարության շքանշանին և իր իսկ կողմից հեղինակած ներկերով տպված՝ նոր տեսակի 6000 ԱՄՆ դոլար պարգևավճարի, որով շարունակում է ուսումը Ելի համալսարանում, դառնում դեղագործ: Այդ գյուտի համար ամերիկյան կառավարության կողմից արժանացել է շքանշանի: 1860 թվականին վերադարձել է Կոստանդնուպոլիս, եղել արքունի բժիշկ, պաշտոնավարել օսմանյան դրամահատարանում և պարգևատրվել Մեջիդիե շքանշանով:



Վերջաբան և անդրադարձ (10 րոպե)

Վարժություն «Դպրոցը ապագայում» –
աշակերտները նկարագրում են, թե
ինչպիսին կլինի իրենց դպրոցը 50 տարի
անց.

Ուսուցիչ----Մենք արդեն խոսեցինք, թե
ինչպես մեր այսօրվա գործողությունները
կարող են ազդել ապագայի վրա՝ կարծես
կամուրջ կառուցենք ներկայից դեպի
ապագա: Բայց եկեք չմոռանանք, որ այդ
կամուրջի ամենակարևոր հիմքերից մեկը
հենց դպրոցն է. այն վայրը, որտեղ մենք
ամեն օր սովորում ենք, շփվում, ձեռք բերում
նոր գիտելիքներ ու ընկերներ:
Այժմ փորձենք միասին պատկերացնել՝
ինչպիսին կարող է լինել դպրոցը
ապագայում:



Վերջաբան և անդրադարձ (10 րոպե)



Հարցեր քննարկման համար.

Որո՞նք են այն նոր առարկաները, որոնք կարող են հայտնվել դպրոցում:

Արդյո՞ք ռոբոտները կարող են դառնալ ուսուցիչներ:

Ինչպե՞ս կարող են փոխվել տնային աշխատանքները:

Կլինի՞ր դպրոցական համազգեստ, թե այն փոխարինվելու է ազատ հագուստով:

Ինչպիսի՞ նոր միջոցառումներ կամ տոնակատարություններ կարող են լինել:

Արդյո՞ք բոլորը դասի կգան նույն ժամին, թե յուրաքանչյուրը կունենա իր անհատական ժամանակացույցը:

Ուսուցիչ---Իսկ ի՞նչ կուզենաք, որ ձեր դպրոցի ապագայում անպայման պահպանվի:

(ընկերությունը, ուսուցիչների հոգատարությունը, միասնական տոները և այլն):

«Դպրոցի ապագան կախված է ոչ միայն տեխնոլոգիաներից ու նորություններից, այլև մեզանից: Մենք ենք որոշում, թե ինչպիսի արժեքներ կմնան դպրոցում՝ ընկերություն, փոխօգնություն, ուսուցչի սերն ու նվիրվածությունը: Դպրոցը հենց այն տեղն է, որտեղ սկսվում է մեր ապագան»:

/«Դպրոցը ապագայում» վարժությունը կարելի է իրականացնել նաև խմբային աշխատանքի ձևաչափով (օր.՝ աշակերտները նկարեն կամ գրեն իրենց ապագայի դպրոցը և ներկայացնեն խմբերով):/

Վերջաբան և անդրադարձ (10 րոպե)



Ուսուցիչ----

Այո՛, մեզանից յուրաքանչյուրն է որոշում, թե ինչպիսին կլինի ապագայի դպրոցը, և ինչպիսին կլինի մեր երկիրը: Հիշե՛ք, որ ձեզանից յուրաքանչյուրը Հայաստանի ապագան է: Մեր դասն ավարտվեց, բայց ապագայի կերպարի վրա մեր աշխատանքը նոր է սկսվում: Թող այս ուսումնական տարին ձեզ համար լինի մեկ քայլ առաջ դեպի ձեր երազանքների իրականացման և ամբողջ Հայաստանի համար պայծառ ապագա ստեղծելու ճանապարհին:



Տնային աշխատանք

Մինի-նախագիծ «Իմ կրթական ճանապարհային քարտեզը» – աշակերտները կազմում են իրենց քայլերը հաջորդ 5 տարում՝ կրթական և անձնական զարգացման համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ